621.39
Ч-21

04 AUG 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

621.39
Կ-21
062

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Խ. Ս. Հ. Մ.

## ՌԱԴԻՈ-ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Библиотека

ԵՐԵՎԱՆ 1928 Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱԳԻՏ.-ՊՐՈՊ. ԲԱԺՆԻ

17.05.2013

11406

Սույն գրքույկում զետեղված են՝

Խ․Ս․Հ․Մ․ Ռադիո-Բարեկամների Ընկերությ (միացյալ) կանոնադրությունը, տեղական (հանրապ ական, գավառային) կազմակերպությունների ուղ ցույցը և Ռ․ Բ․ Ընկ․ բջիջների կանոնադրությունը։

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2999
ԳՐԱՌԵՊ. 778 Գ. ՏԻՐԱԺ 1000

ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի Նախապատրաստական Հանձնաժողովի Նախագահ՝ Գ. ԼԵՊԼԵՎՍԿԻՅ — Ն. Հ. Նիստի արձ. № 31 կետ. 6. 6/XI. 26 Թ.

Հաստատում եմ.

ԽՍՀՄ-ի Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ

ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի և ԱՊԽ-ի Գործ. վարիչ՝ (ստորագր.)

ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի Քարտուղար՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

ԺԿԽ-ի Արձ. № 188, 21/XII, 26 Թ.

# I ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԽՍՀՄ-Ի ՌԱԴԻՈ-ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

§ 1․

*ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունը կազմակերպվում է ռադիո-շարժման գաղափարների պրոպագանդայի համար, ԽՍՀՄ-ի աշխատավորական լայն մասսաների մեջ ռադիո-տեխնիկական գիտելիքները ժողովրդականացնելու համար, ռադիո-համակրական շարժումը միավորելու և ուղղելու համար դեպի ԽՍՀՄ-ի շահերը, ռադիոֆիկացիային մասնակցելու և ռադիոն օգտագործելու համար, վորպես ԽՍՀՄ-ի ժողովուրդների կուլտուրական վերելքի մի հզոր գործոն։*

§ 2․

*Սույն կանոնադրության § 1-ում նշված նպատակների համաձայն, ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունը իրավունք ունի․—*

*ա) ԽՍՀՄ-ի տերիտորիայում հիմնել իր ճյուղերը համաձայն դաշնակից հանրապետությունների որենսդրության,—*

բ) Ոժանդակել ռադիո-տեխնիկական գիտելիքների տարածմանը և ռադիո-տեխնիկայի բնագավառում հետազոտողների և հրահանգիչների կադրեր պատրաստելուն, կազմակերպելով այդ նպատակով դասընթացքներ, դասախոսություններ, ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ, լաբորատորիաներ, կոնսուլտացիաներ և այլն,—

գ) Կազմակերպել մրցություններ ռադիո հարցերի առթիվ, տալով մրցանակներ, պատվանշաններ և դիպլոմներ,—

դ) Համաձայնության գալով Փոստհեռագրկոմատի հետ, կառուցել և սարքավորել հաղորդող և ընդունող ռադիո-կայաններ և ոգտվել այդպիսիներից, նույնպես և, իշխանության համապատասխան մարմինների թույլտվությամբ, ոգտվել պետական ռադիո- կայաններից, հաղորդելու և ընդունելու համար ԽՍՀՄ-ի ղեկավար մարմինների նիստերը, զեկուցումները, դասախոսությունները, համերգները և այլն,—

ե) Աջակցություն ցույց տալ պետական հիմնարկներին և ձեռնարկներին, ռադիո-տեխնիկայի և նրա գաղափարների պրոպագանդայի բնագավառում նրանց ունենալիք գործունեության մեջ,

զ) Ռադիո-տեխնիկայի բոլոր հարցերի վերաբերմամբ հրատարակել թերթեր, բրոշյուրներ, գրքույկներ և այլն,—

է) Նպաստել ռադիո-գործերի և ռադիո-տեխնիկայի վերաբերյալ հրատարակություններ արտադրելու և տարածելու գործին, ինչպես և հասարակական և կոոպերատիվ հիմնարկներին՝ ընդունող հաղորդող ռադիո-կայաններ կառուցելու և ոգտագործելու մեջ,—



ը) Մասնակցել և մտնել ԽՍՀՄ-ի տերիտորիայում գործող այն ամեն տեսակի գիտական և գիտական-տեխնիկական կազմակերպությունների մեջ, վորոնց նպատակն է ուսումնասիրել ռադիոտեխնիկայի խնդիրները, նմանապես և ուսումնասիրել ռադիո-տեխնիկայի և ռադիո-արդյունաբերության խնդիրները և գործնականում կիրառել այդ բնագավառներում արված բոլոր նվաճումները.—

թ) Մասնակցել ռադիոյի վերաբերմամբ տեղի ունենալիք միջազգային ընկերություններին, միություններին, համագումարներին, կոնգրեսներին, ցուցահանդեսներին և այլն:

§ 3.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունը ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով:

Ծանոթություն.—Ընկերությունները և նրա տեղական կազմակերպությունները իրավունք ունեն ընդունելու վարեն գույք, վորպես նվեր:

§ 4.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունը ունի իր կնիքը, ռադիոյի խորհրդանշանով և «ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերություն» մակագրությամբ:

## II ԽՍՀՄ-Ի ՌԱԴԻՈ-ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

§ 5.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունը կազմված է իսկական անդամներից և ռադիոյի պատանի բարեկամներից:

§ 6.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամ կարող են լինել ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավոր քաղաքացիները, վորոնց տարիքը 18-ից ցածր չէ:

Ծանոթություն.—Այն անձինք, վորոնք զրկված են ընտրողական իրավունքից և իրենց անվայել արարքների համար առաջներում դուրս են արված ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությունից, ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամ ընդունվել չեն կարող:

§ 7.

Ռադիոյի պատանի բարեկամներ կարող են լինել 7-ից մինչև 18 տարեկան անձինք:

§ 8.

Իսկական անդամների և ռադիոյի պատանի բարեկամների ընդունելությունը կատարվում է ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության բջիջների բյուրոյի միջոցով, վորպիսի հանգամանքը հետագայում հաստատվում է բջիջի անդամների ընդհանուր ժողովի կողմից:

## III ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

§ 9.

Իսկական անդամները և ռադիոյի պատանի բարեկամները վճարում են.—

ա) Շարքային կարմիր բանակայինները, գյուղացիները, գործազուրկները, պիոներները և բոլոր դպրոցական հաստատությունների ուսանողները.—



մուտքի վճար . . . . . 10 կոպ.
տարեկան վճար . . . . . 30 կոպ.

բ) Մնացածները.—

մուտքի վճար . . . . . 20 կոպ.
տարեկան վճար . . . . . 60 կոպ.

§ 10.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության բոլոր անդամները ունեն հետևյալ իրավունքները.—

ա) ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամների ժողովներում և խորհրդակցություններում՝ վճռական ձայնի իրավունք և ընտրվելու իրավունք՝ ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության վարչական բոլոր պաշտոնների մեջ:

Ծանոթություն.—Ռադիո պատանի բարեկամները ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամների ժողովներում և խորհրդակցության ձայնի իրավունք և ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության վարչական պաշտոնների մեջ ընտրվել չեն կարող:

բ) Իրավունք՝ անվճար կերպով օգտվելու ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության մշտական հիմնարկություններից (կոնսուլտացիայից, լաբորատորիաներից, գրադարաններից և այլն).—

գ) Իրավունք՝ արտոնյալ պայմաններով օգտվելու ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության կազմակերպած ցուցահանդեսներից, թանգարաններից, դասախոսություններից և այլն.—

դ) Նախապատվության իրավունք՝ ընդունվելու

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության կազմակերպած ռադիո-տեխնիկական դասընթացները.—

յե) Իրավունք՝ ձեռք բերելու Ընկերության կազմակերպությունից արտոնյալ պայմաններով ռադիո-գործիքներ և ռադիո-գրականություն.—

զ) Իրավունք՝ կրելու ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության կրծքանշան:

§ 11.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամները պարտավոր են.—

ա) Ագիտացիա մղել ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության շարքերը մտնելու համար.—

բ) Աջակցություն ցույց տալ ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերությանը ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների ընկերության տեղական կազմակերպություններ և բջիջներ ստեղծելու գործում.—

գ) Ավելացնել իրենց ռադիո-գիտելիքները և նպաստել ռադիո-գիտելիքները բանվորա-գյուղացիական լայն մասսաների մեջ տարածելուն.—

դ) Նպաստել ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության հրատարակությունների և ռադիո-գործիքներ տարածելուն.—

յե) Ակտիվ կերպով մասնակցել ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության տարած աշխատանքներին՝ իր բջիջում.—

զ) Յենթարկվել ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության բոլոր վորոշումներին.—

է) Ժամանակին վճարել անդամավճարները:



§ 12.

ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամները վտարված են համարվում ընկերության կազմից հետևյալ դեպքերում.—

ա) Ընկերությունից հրաժարվելու մասին տրված հայտարարության դեպքում.—

բ) 3 ամսից ավելի անդամավճար չվճարելու դեպքում.—

գ) Ընտրողական իրավունքներից զրկվելու դեպքում.—

դ) ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության անդամի կոչումը վարկաբեկող և այդ կոչման հետ անհամատեղելի վորևե վարմունքի դեպքում:

Ծանոթություն.—1. Սույն §-ի կետ «դ»-ում հիշատակված վճարումը կատարվում է ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության համապատասխան բջիջի բյուրոյի վորոշմամբ, ԽՍՀՄ-ի Ռ-Բ. Ընկերության վտարված անդամին իրավունք է վերապահվում բողոքարկել ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության համապատասխան բարձրագույն մարմիններին, մինչև իսկ Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Համագումարին:

2. ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության անդամավճար չմուծող անդամները կարող են պահել ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության անդամի կոչումը միայն այն դեպքում, յերբ կվճարեն ամբողջ անցած ժամանակամիջոցի անդամավճարները:

§ 13.

ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերությունից թե կամավոր

կերպով հրաժարված և թե վտարված անդամները իրավունք չունեն յետ պահանջելու իրենց վճարած անդամավճարները:

§ 14.

ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության վարչության մարմիններն են.—

Ա. Ռադիո-Բարեկամների Ընկերության պատգամավորների Համամիութենական Համագումարը.—

Բ. Ռադիո-Բարեկամների Ընկերության Համամիութենական Խորհրդի Նախագահությունը.—

Գ. ԽՍՀՄ.-ի Ռադիո-Բարեկամների Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովը:

§ 15.

Ռադիո-Բարեկամների Ընկերության պատգամավորների Համամիութենական Համագումարը հրավիրվում է. Ռադիո-Բարկ. Ընկերության Համամիութենական Խորհրդի ձեռներեցությամբ, ոչ հաճախ, քան տարեկան մի անգամ: Արտակարգ Համագումարներ հրավիրում է Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհուրդը իր ձեռներեցությամբ, կամ ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի պահանջմամբ, և կամ Ռադիո-Բարեկամների Հանրապետական Ընկերությունների մեկ յերրորդից ոչ պակաս գրավոր հայտարարություններով:

§ 16.

Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Համագումարի գումարման տեղն ու ժամանակը և ռեգլամենտը վորոշում է Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Խորհուրդը:



Հերթական համագումարների օրակարգը հայտարարվում է յերկու ամիս առաջ, իսկ արտակարգներինը՝ գումարումից յերկու շաբաթ առաջ ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության օրգանում, ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի և Համ.ԿԳԿ-ի օրգան «Իզվեստիա»-յի մեջ և դաշնակից հանրապետությունների ԿԳԿ-երի օրգաններում:

§ 17.

Համամիութենական Համագումարը օրինական է համարվում, յեթե ներկա յեն Համագումարի համար ընտրվելիք պատգամավորների ընդհանուր թվի կեսից ոչ պակաս:

Համամիութենական Համագումարը կազմվում է հանրապետական Ռ.-Բ. Ընկերությունների պատգամավորներից, Ռադիո-Բարեկամների Ընկերության Համամիութենական Խորհրդի վորոշած նորմայով:

§ 18.

Համամիութենական Համագումարների զբաղմունքի առարկաներն են համարվում...

ա) Ռադիո-Բարեկամների Ընկերության կանոնադրության փոփոխության խնդիրների քննությունը.—

բ) Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի, նրա Նախագահության և Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվեկշռի, զեկուցումների և հաշվետվությունների քննությունն ու հաստատումը.—

գ) ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության մինչև հետևյալ համագումարը կատարելիք աշխատանքի ծրագրի և ունենալիք Ֆինանսական յենթադրությունների քննությունն ու հաստատումը.—

դ) Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի ընտրությունը.—

ե) ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերությունը լուծարքի ենթարկելի հարցի վորոշումը.—

զ) Այն բոլոր հարցերի քննությունը, վորպիսիների իրավասությունը Համագումարը վերապահում է իրեն:

Ծանոթություն.—Բոլոր հարցերը Համագումարը վճռում է ձայների հասարակ մեծամասնությամբ, բացի այս §-ի «ա» և «ե» կետերում հիշատակվածներից,, վորպիսի հարցերը վճռելու համար անհրաժեշտ է Համագումար յեկած բոլոր պատգամավորների ձայների $^{2}/_{3}$-ը, ըստ վորում այդ հարցերը կարող են դրվել համագումարի քննությանը միայն այն դեպքում, յեթե այդ մասին հայտարարված է յեղել սույն կանոնադրության § 16-ում նշված կարգով:

§ 19.

Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Խորհուրդը ընտրվում է Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Համագումարի կողմից, Համագումարի վորոշած կարգով:

§ 20.

Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Խորհուրդը Համամիութենական Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցի ընթացքում հանդիսանում է ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության բարձրագույն մարմինը: Նրա իրավասությանն է յենթակա.—



ա) ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության նախագահության աշխատանքի ուղղությունն ու ղեկավարությունը.—

բ) ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության Նախագահության հաշվեկշիռների, հաշվետվությունների և նախահաշիվների քննությունն ու հաստատումը.—

գ) Համամիութենական համագումարների և կոնֆերենցիաների վորոշումների իրագործման հսկողությունը.—

դ) ԽՍՀՄ-ի Ռ.-Բ. Ընկերության առաջիկա տարվա աշխատանքների ընդհանուր ծրագրի և ֆինանսական յենթադրությունների քննությունը և այդպիսիները Ռ.-Բ. Ընկերության Համամիութենական Համագումարի քննությանն ու հաստատմանն առաջարկելը:

§ 21.

Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահության ձեռներեցությամբ վոչ պակաս, քան յերեք ամիսը մեկ անգամ: Արտակարգ նիստեր կարող են հրավիրվել ինչպես նախագահության ձեռներեցությամբ, նույնպես և Խորհրդի անդամների $^{1}/_{3}$-ից վոչ պակասի պահանջմամբ:

§ 22.

Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի նիստերը իրավազոր են համարվում Խորհրդի Մոսկվայում մշտապես ապրող անդամների $^{2}/_{3}$ առկայության դեպքում: Կվորումը բացակայելու դեպքում, ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության նախագահությունը կարող է հրավիրել հետևյալ նիստը, վորն անկախ Ռ. Բ. Ընկերու-

թյան Համամիութենական Խորհրդի անդամների թվից կհամարվի օրինական:

§ 23.

Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի անդամները կարող են ներկա լինել Ընկերության Նախագահության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

§ 24.

Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհուրդն իր միջից ընտրում է ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Նախագահություն՝ Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի կողմից վորոշված կազմով:

§ 25.

Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի նախագահը, նրա տեղակալը և գլխավոր քարտուղարը, վորոնք ընտրվում են Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի պլենումի կողմից, մտնում են նրա նախագահության կազմի մեջ և հանդիսանում են նրա նախագահը, տեղակալը և գլխավոր քարտուղարը:

§ 26.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Նախագահության նիստերը գումարվում են շաբաթական մեկ անգամ և կայացված են համարվում ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Նախագահության անդամների կեսից վոչ պակաս առկայության դեպքում: Նախագահության վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հարցը փոխադրվում է Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի քննությանը:



§ 27.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Նախագահության իրավասության են պատկանում հետևյալ խնդիրները —

ա) ԽՍՀՄ-ի Ռադիո-Բարեկամների Հանրապետական Ընկերությունների գործունեության միավորումը, ուղղություն տալը և ղեկավարությունը:

բ) Առաջիկա գործառնական տարվա կամ նրա կվարտալների համար աշխատանքների ծրագիր և ֆինանսական յենթադրությունների մշակումը և այդպիսիները Ռ. Բ. Ընկերության Խորհրդի քննության ու հաստատմանը ներկայացնելը:

գ) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության ամբողջ աշխատանքի ի կատար ածելը, համաձայն Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի և Համամիութենական Համագումարի հաստատած ընդհանուր աշխատանքների ծրագրի:

դ) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անունից ռադիո-համակրողների միջազգային միության և ռադիո-համակրողների արտերկրյա առանձին կազմակերպությունների հետ գրագրություն վարելն ու կապ պահպանելը:

յե) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության ամբողջ գործերի և ունեցվածքի կառավարչությունը:

զ) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության ֆինանսական բոլոր գործառնությունների վարելը, վորի թվում նաև վարկերի և փոխատվությունների առնելը և մուրհակներ տալը:

է) Հաշվետվության վարելը, տարեկան նախահաշիվների, հաշվետվությունների և հաշվեկշիռների կազմելը և դրանց հետագայում Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի հաստատմանը ներկայացնելը, իսկ տարեկան հաշվեկշիռը Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Համագումարի հաստատությանը ներկայացնելը: Համամիութենական Համագումարի կողմից հաստատված հաշվեկշիռները հրապարակվում են ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի և ՀամԿԳԿ-ի «Իզվեստիայի» մեջ:

ը) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անունից ներկայացուցչության ամեն տեղ և բոլոր հիմնարկություններում, առանց բացառության նաև դատական վայրերում, և գրագրություն ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անունից Ընկերության բոլոր գործերի վերաբերյալ:

թ) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անունից հավատարմագրեր, հավաստագրեր և ստացականներ տալը:

ժ) Ամեն տեսակի նյութեր և գույք գնելը և վաճառելը՝ թե կանխիկ և թե ապառիկ, նույնպես և ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անունից ամեն տեսակի պայմանագրեր և արձանագրություններ կազմելը, գույքի և շենքերի վարձումն ու վարձակալությունը, գույքի ապահովագրումը և այլ տնտեսական գործառնություններ կատարելը:

ժա) ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Համագումարների, Կոնֆերենցիաների և Խորհուրդների քննության յենթակա խնդիրների մշակումը:

ժբ) Ռադիոյի Բարեկամների հանրապետական կազմակերպությունների հրահանգումը:



§ 28.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ընտրվում է Համամիութենական Համագումարի կողմից, Համագումարի այն պատգամավորների թվից, վորոնք չեն մտնում Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Խորհրդի կազմի մեջ: Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է Համամիութենական Համագումարի վորոշած թվով, սակայն վոչ պակաս 7 անդամից և 3 թեկնածուից: Վերստուգիչ Հանձնաժողովի նախագահը ընտրվում է Հանձնաժողովի կողմից:

§ 29.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովը գումարվում է տարեկան 3 անգամից վոչ պակաս, ստուգման յենթարկելու այն մարմինների գործունեյությունը, վոր նշված են սույն կանոնադրության § 14-ի «Ա», «Բ», «Գ» կետերում և այդ ընկերության մարմիններին յենթակա ձեռնարկությունները:

§ 30.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ներկա լինելու ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության Նախագահության և Խորհրդի, նույնպես և Ռ. Բ. հանրապետական Ընկերությունների բոլոր թե դռնբաց և թե դռնփակ նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով:

§ 31.

Ռ. Բ. հանրապետական ընկերությունները կազմակերպվում են Դաշնակից Հանրապետությունների վո–

րոշած օրենսդրական կարգով: Իրենց գործունեության մեջ նրանք պարտավոր են ղեկավարվել իրենց կանոնադրությամբ, ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության կանոնադրությամբ և ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության այն մարմինների հրահանգներով, վոր նշված են սույն կանոնադրության § 14-ում: Ռ. Բ. Հանրապետական Ընկերությունների կանոնադրությունները պիտի համաձայնեցված լինեն սույն կանոնադրության հետ:

§ 32

Ռ. Բ. Հանրապետական Ընկերությունների անդամները ինքնին հանդիսանում են վորպես ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության անդամներ:

§ 33.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության դրամական միջոցները գոյանում են.—

ա) Դասախոսությունների, ռադիո-համերգների, զեկուցումների, ռադիո-ռեկլամների, ցուցահանդեսների և այլն հասույթներից.—

բ) Ընդունող և հաղորդող ռադիո-կայանների կառուցման հասույթներից.—

գ) Ռադիո-գործիքների և ռադիո-գրականության վաճառման հասույթներից.—

դ) Հրատարակչության հասույթներից.—

յե) Շարժական և անշարժ գույքի շահագործման հասույթներից.—

զ) Սուբսիդիաներից.—

է) Հատուկ նվիրաբերություններից.—



ը) Տեղական կազմակերպությունների ստացած անդամավճարների հանումներից և

թ) Մնացած այլ մուտքերից:

§ 34.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության ստանալիք անդամավճարների հանումների չափը յուրաքանչյուր տարի վորոշում է Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Համագումարը:

§ 35.

Հաշվետու տարին սահմանվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը, ըստ վորում առաջին հաշվետու տարին հաշվում է ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության կազմակերպման վայրկյանից:

## ԽՍՀՄ-Ի Ռ.-Բ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

§ 36.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության փակվելը կարող է կատարվել Համամիութենական Համագումարի վորոշմամբ, սույն կանոնադրության § 18-ի «յե» կետի և նրա ծանոթության կարգով, և կամ ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշմամբ:

§ 37.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության գործունեության և գույքի լուծարքը կատարում է Ռ. Բ. Ընկերության Համամիութենական Համագումարի նշանակած Լուծարքային Հանձնաժողովը: ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերությունը ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման հետևանքով լուծարքի յենթարկելու դեպքում, Լուծարքային Հանձ-

նաժողովը նշանակվում է լուծարքի յենթարկելու վորոշման մեջ հիշատակված կարգով:

§ 38.

ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության լուծարքի դեպքում, ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկերության ամբողջ գույքը անցնում է ԽՍՀՄ-ի կառավարության տնօրինությանը:

ԽՍՀՄ Ռադիո-Բարեկամների Ընկերության

Խորհրդի և Պրեզիդիումի նախագահ՝ ԼՅՈՒԲՈՎԻՉ

փոխնախագահ՝ ԽԱԼԻՊՍԿԻՅ.

Գլխավոր Քարտուղար՝ ԲՈՒԿԱՌԻ.

---



# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Ռ. Բ. ԸՆԿ. ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

§ 1.

Ռ. Բ. Ընկ. տեղական կազմակերպությունները առաջ են գալիս և իրենց աշխատանքը տանում են ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. կանոնադրության կամ հանրապետական համապատասխան կանոնադրությունների հիման վրա:

§ 2.

Ռ. Բ. Ընկ. տեղական կազմակերպությունները յենթարկվում են ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. հանրապետական վարչության և կենտրոնական մարմինների բոլոր ծրագրերին, հրահանգներին, դիրեկտիվներին և ցուցումներին, խստիվ պահպանելով Ռ. Բ. Ընկ. մարմինների և կազմակերպությունների հետևողական յենթարկման սկզբունքը:

§ 3.

Ռ. Բ. Ընկ. տեղական կազմակերպությունները ստորաբաժանվում են Ռ. Բ. Գավառային և շրջանային բաժանմունքների կամ բջիջների:

§ 4.

Ռ. Բ. Ընկերության գավառային կազմակերպությունները անմիջականորեն յենթարկվում են Հանրապետության Ռ. Բ. Ընկերությանը. իսկ շրջանային բաժանմունքները յենթարկվում են անմիջականորեն իրենց գավառի, Ռ. Բ. Ընկերության վարչությանը:

§ 5.

ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. բոլոր կազմակերպությունները ինքնավար են տեղական խնդիրներ վորոշելու մեջ, յեթե դա չի խախտում հանրապետական կազմակերպությունների կողմից հաստատված աշխատանքների ընդհանուր ծրագրները:

§ 6.

Տեղական կազմակերպությունների վարչության մարմինները կազմակերպվում են ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. վարչության կենտրոնական մարմինների կազմության սկզբունքով:

§ 7.

Յուրաքանչյուր կազմակերպության վերին ղեկավար մարմին է հանդիսանում.—բջիջների բաժանմունքների համար՝ ընդհանուր ժողովը, հանրապետական Ռ. Բ. Ընկերությունների համար՝ Համագումարը:

§ 8.

Համագումարին ներկայացուցչություն ուղարկելու վերադաս մարմինների նորման վորոշվում է վերջիններիս կողմից՝ յուրաքանչյուր տարի:

§ 9.

Տեղական կազմակերպությունների խորհրդի, նախագահության և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է վերադաս կազմակերպությունների կողմից՝ համաձայն տեղական կազմակերպությունների խորհուրդների առաջադրության:

§ 10.

Ռ. Բ. Ընկ. գավառային կամ շրջանային ընդհանուր ժողովները բաժանվում են սովորական և ընդլայնած ընդհանուր ժողովների:

§ 11.

Սովորական ընդհանուր ժողովներին հրավիրվում են Ռ. Բ. Ընկ. այն անդամները, վորոնք ապրում են Ռ. Բ. Ընկ. տվյալ բաժանմունքի վարչական մարմինների գտնված վայրում: Ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յեն այդ վայրում ապրող անդամների ամբողջ քանակի մի յերրորդը:

§ 12.

Ընդլայնած ընդհանուր ժողովներին հրավիրվում են Ռ. Բ. Ընկ. այն անդամները, վորոնք ապրում են Ռ. Բ. Ընկ. տվյալ բաժանմունքի վարչական մարմինների գտնված վայրում, ըստ վորում ժողովին մասնակցում են ներկայացուցիչներ գավառակային և գյուղական բջիջներից, նույնպես և ուրիշ այնպիսի բջիջներից, վորոնք գտնվում են ժողովի գումար. վայրի սահմաններից դուրս և մտնում են բաժանմունքի կազմի մեջ (ամեն մի բջիջից մեկական ներկայացուցիչ): Ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յեն այդ վայրում ապրող անդամների ամբողջ քանակի կեսը, և հրավիրված բջիջների ներկայացուցիչների ½-ը:

§ 13.

Ժողովի ժամանակ մեծամասնություն չլինելու դեպքում, ժողովը կարող է հետաձգվել մի այլ ժամանակ և օրինական համարվել անկախ ներկա յեղողների թվից:

§ 14.

Ռ. Բ. Ընկ. տեղական կազմակերպությունների վարչական մարմինների գործունեության շրջանը համանման է ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկ. կանոնադրության §§ 14–30-ով նախատեսնված ԽՍՀՄ-ի Ռ. Բ. Ընկ. կենտրոնական մարմինների գործունեյության շրջանին, միայն թե համապատասխան մասշտաբով:

---



# ՆԱԽԱԳԻԾ

## Ռ. Բ. ԸՆԿ. ԲՋԻՋՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 1.

Ռ. Բ. Ընկ. բջիջը ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. ստորին հիմնական այն կազմակերպությունն է, վոր անմիջականորեն շփվում է աշխատավոր մասսաների հետ, և իրականացնում է Ռ. Բ. Ընկ. նպատակներն ու խնդիրները:

§ 2.

Ռ. Բ. Ընկ. բջիջը միավորում է Ռ. Բ. Ընկ. բոլոր անդամներին՝ ձեռնարկություններում, հիմնարկություններում, զավոդներում, գործարաններում, գյուղում, կարմիր-բանակային մասերում, բնակարանային ընկերություններում, դպրոցներում և այլն:

§ 3.

Ռ. Բ. Ընկ. բջիջը կազմակերպվում է 5 հոգուց վոչ պակաս կազմով:

§ 4.

Ռ. Բ. Ընկ. բջիջները անմիջականորեն յենթակա յեն Ռ. Բ. Ընկ. վերադաս բաժանմունքին:

Ծանոթություն 1.—Գյուղական և շինական բջիջները կարող են միանալ շրջանային բջիջների մեջ:

2.—Կարմիր-բանակային մասերում գտնվող բջիջները կարող են միանալ զինմասերի ռազմական միավորումների միավորելու սկզբունքով։

§ 5.

Ռ. Բ. Ընկ. բջիջները առաջ են գալիս և տանում են իրենց աշխատանքը ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. կանոնադրության հիման վրա և յենթարկվում են Ռ. Բ. Ընկ. կենտրոնական և տեղական մարմինների բոլոր կարգադրություններին։

§ 6.

Ռ. Բ. Ընկ. բջիջի աշխատանքը հետևյալն է.—

1) Հավաքագրել, ընդունել և փարել Ռ. Բ. Ընկ. անդամներին.—

2) Ռադիոյի մասին ագիտացիա անել, պրոպագանդա մղել և ժողովրդականացնել ռադիոն, ռադիո-գրականություն և ռադիո-գործիքներ տարածելու միջոցով, կոնսուլտացիա անելով, լայն մասսաների մեջ ժողովներ, դասախոսություններ, զեկուցումներ, դեմոնստրացիաներ կազմակերպելով։

Ծանոթություն.—Այս նպատակների համար Ռ. Բ. Ընկ. բջիջը կամպանիաներ և անցկացնում միօրյակներ, յերեքօրյակներ և այլն համապատասխան Ռ. Բ. Ընկ. վերադաս կազմակերպությունների մշակած ծրագրի, կազմակերպում է ռադիո-տեղաշարժեր, տարածում է թերթիկներ, պլակատներ, կազմակերպում է պատի ռադիո-լրագրեր, ռադիո-ցուցահանդեսներ, ռադիո-յերեկույթներ, կամ յերեկույթներում ռադիոյին նվիրված բաժիններ, ընդունում է գյուղի խմբակների կամ բջիջների շեֆությունը և այլն։



3) Ռադիոտեխնիկայի մասին գործնական և տեսական պարապմունքներ կազմակերպել.—

4) Լայնահաղորդի լսելն ու ոգտագործելը կազմակերպել.—

5) Բջիջում ընդունող, իսկ վորտեղ էլ հնարավոր է, նաև հաղորդող, սիրողների ռադիո-կայաններ հիմնել.—

6) Հետևել միութենական և արտասահմանյան կայանների լսելի լինելուն.—

7) Համաձայն ՀՍԽՀ-ի Ռ. Բ. Ընկ. կանոնադրության հավաքել դրամական միջոցներ։

§ 7.

Ռ. Բ. Ընկ. բջիջի վերին մարմինն է բջիջի ընդհանուր ժողովը, վորը վավերական է, յեթե ներկա յե բջիջի կազմի մեջ մտնող անդամների ընդհանուր թվի կեսը։

§ 8.

Ընդհանուր ժողովը իր միջից ընտրում է 3-5 հոգուց բաղկացած բջիջի բյուրո 6 ամիս ժամանակով և 3 հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողով։

Ծանոթություն.—Մինչև 10 անդամ ունեցող բջիջներում բյուրո չի ընտրվում և աշխատանքը ղեկավարում է բջիջի պատասխանատու քարտուղարը, վորը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից։

§ 9.

Ռ. Բ. Ընկ. բջիջները և նրանց բյուրոները հաստատվում են վերադաս կազմակերպության խորհրդի կողմից։

§ 10·

*Բջիջի ցրումը կարող է կատարվել Ռ· Բ· Ընկ· բջիջի ընդհանուր ժողովի կողմից և կամ Ռ· Բ· Ընկ· վերադաս կազմակերպության խորհրդի վորոշմամբ։*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Երևան
Публичная Библиот

ՀՀ Ազգային գրադարան
NL0270610

11706